ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/25-3

ք. Երևան «14» «05» 2024 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷԼԻՏ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Տ.Առաքելյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտաս 16 շենքի բակի հիմնանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/25 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալատուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Համաձայն հավելված 2:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից՝ տոմսերով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերին և երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են պայմանագրի N 1.1 Հավելվածում

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում

վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 22351288 (քսաներկու միլիոն երեք հարյուր հիսունմեկ հազար երկու հարյուր ութսունութ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	*Խախտումը*	*Պատասխանատվությունը*
1	Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարելը	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով

2	Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով
3	Սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելը	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառուի կամ Պատվիրատուի) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները, ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման գործընթացը ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները

կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 20 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրով նախատեսնված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է **Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Երևանի քաղաքապետարան	«ԷԼԻՏ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	Հասցե ք.Մասիս, 8 փ. տուն 22
ՀՀ ֆինանսների նախարարության	Բանկ՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
գործառնական վարչություն	Հ/Հ 220163331378000
ՀՀ 900032313174	ՀՎՀՀ 00190721
ՀՎՀՀ 02593108	
Վ.Պապիկյան	Տ.Առաքելյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 1
«14» «05» 2024 թ. կնքված
ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/25-3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	ԳՄԱ կոդ (CPV)	Արաբկիր վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում, ընդ որում՝	Տեխնիկական բնութագիր	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	Կատարման ժամկետ է համարվում սույն աշխատանքների պայմանագիրը և տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը, իսկ աշխատանքների կատարման համար սահմանվում է նշված օրը ներառյալ
5	45611300/88	Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտաս 16 շենքի բակի հիմնանորոգման աշխատանքներ	Գնման առարկա է հանդիսանում Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի շենքերի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքները Աշխատանքները պետք է իրականացվեն աշխատանքների ծավալաթերթով նախատեսված ծավալներին և ձևին համապատասխան: 1. Ընթացակարգին մասնակից կազմակերպությունը գնի առաջարկը սահմանելու նպատակով իրավունք ունի նախորոք այցելելու շին հրապարակ: 2. Վերանորոգման աշխատանքները պետք է սկսվեն պայմանագրի հաստատման պահից 2/ երկու / աշխատանքային օրվա ընթացքում: 3. Աշխատանքները իրականացնող բանվորները պետք է ունենան համապատասխան աշխատանքային փորձ, իսկ աշխատանքները իրականացնելու ժամանակ պետք է կրեն հատուկ աշխատանքային վերնազգեստ, պահպանելով անվտանգության կանոնները: Շին հրապարակը պետք է առանձնացվի հատուկ պարսպով. 4. Աշխատանքները կատարել երեք փուլերով՝ ա/ առաջին փուլում կատարել պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 50 օրացուցային օրում պայմանագրային ամբողջ ծավալի առնվազն 30%-ը բ/ երկրորդ փուլում կատարել պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 100 օրացուցային օրում պայմանագրային ամբողջ ծավալի առնվազն 80%-ը գ/ երրորդ ավարտական փուլում միջև պայմանագրի	22351288	130 օրացուցային օր

			վերջնաժամկետը կատարել մնացած աշխատանքները 100%-ով:		

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

5-րդ չափաբաժին

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտաս 16 շենքի բակի հիմնանորոգման աշխատանքների

NN	հիմնավորում	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը /հազ դրամ/	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4	5	6	7
		Շինարարական աշխատանքներ				
		Քանդման աշխատանքներ				
1	27-36	Բետոնե եզրաքարերի ապամոնտաժում H=400մմ	գմ	21.200	1.335	28.31
2	27-36	Բետոնե եզրաքարերի ապամոնտաժում 150x300մմ, բետոնե հիմքով	գմ	250.200	1.335	334.11
3	P9-26	Մետաղական բազրիքի ապամոնտաժում H=900մմ, հետաղա վերատեղադրումով	գմ	67.100	0.708	47.52
4	E46-99	Բետոնե հատակի քանդում 15.1մ2	մ3	1.510	22.553	34.05
5	P25-17 K=0,6 K=0,7 կիրառ	Տաղավարի ապամոնտաժում 2հատ	տն	0.950	52.592	49.96
6	E27-33	Ասֆալտաբետոնե ծածկույթի քանդում 1550մ2	մ3	77.500	5.404	418.81
7	E27-31	Խճի շերտի քանդում 1550մ2	մ3	155.000	0.674	104.52
8	7-668 K=0,6 կիրառ	Նստարանների ապամոնտաժում	հատ	5.000	1.363	6.81
9	7-668 K=0,6 կիրառ	Աղբամանների ապամոնտաժում	հատ	3.000	1.363	4.09
10	7-668 K=0,6 կիրառ	Մարզասարքերի ապամոնտաժում	հատ	3.000	1.363	4.09
11	7-668 K=0,6 կիրառ	Մետաղական սեղանների ապամոնտաժում	հատ	2.000	1.363	2.73
12	7-668 K=0,6 կիրառ	Մետաղական աթոռների ապամոնտաժում	հատ	6.000	1.363	8.18

13	Р19-2 կիրառ	Գոյություն ունեցող ոռոգման խողովակաշարի ապամոնտաժում	գմ	93.500	0.888	82.98
14	С310-13 տ.մ.կ29	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ /այդ թվում տեղում առկա շին աղբ-35.2մ3/	տն	514.241	4.540	2334.53
		Ընդամենը	15.01	%		**3460.68**
		Բարեկարգման աշխատանքներ				
15	8-11	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում	մ3	2.230	9.501	21.19
16	27-87	Բազալտե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով 80x200մմ	.Ն	223.000	6.503	1450.17
17	8-11	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում	մ3	1.850	9.501	17.58
18	27-86	Բազալտե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով 150x300մմ	.Ն	92.500	12.899	1193.20
19	Е1-1592	Բուսահողի բարձում ա/ինքնաթափերի վրա	մ3	3.100	2.837	8.79
20	С310-35	Բուսահողի տեղափոխում 35 կմ-ից	տն	3.720	7.391	27.49
21	Е48-168	Բուսահողի փռում ձեռքով	մ2	31.00	0.555	17.22
22	Е48-214	Սերմի ցանում	մ2	31.00	0.221	6.84
23	13-263 15-614	Մետաղական բազրիքների հղկում, 2 շերտ ներկում	մ2	46.970	3.449	161.99
24	Е7-735	Մետաղական բազրիքների վերատեղադրում	.Ն	67.100	3.623	243.11
25	11-6	Խճի շերտի պատրաստում 10սմ հաստությամբ /բետ սալիկների տակ/	մ3	18.500	16.739	309.67
26	Е23-1	Ց/ավազե չոր խառնուրդի պատրաստում բետոնե սալիկների	մ3	9.250	15.833	146.46

		տակ 5սմ հաստությամբ				
27	27-175	Բ»ïáÝ» ¹»Ïáñ³ïÇí ë³ÉÇÏÝ»րի տեղադրում (старый город)	մ2	185.00	10.156	1878.77
28	Е27-173	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	մ2	1360.00	1.727	2349.35
29	Е27-169 Е27-172	Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 5սմ հաստությամբ	մ2	1360.000	5.330	7248.68
30	Р13-29	Ցայտաղբյուրի վերանորոգում, հղկում	մ2	1.800	11.916	21.45
31	Р11-98	Գոյություն ունեցող քարե շինության լավորակ g/ավազե սվաղ	մ2	37.000	2.104	77.86
32	Р11-98	Գոյություն ունեցող պատերի լավորակ g/ավազե սվաղ	մ2	76.500	2.104	160.99
33	15-673 կիրառ	Պատերի դեկորատիվ նկարազարդում, մածկապատումով	մ2	25.000	5.454	136.34
34	8-11	Խճի շերտի պատրաստում	մ3	1.000	9.501	9.50
35	Е6-22	ØÇ³ÓáõÛÉ »/µ Å³å³ï»Ý³ÛÇÝ ÑÇÙù»ñÇ å³ïñ³ëïáõÙ В-15 ¹³ëÇ µ»ïáÝÇó	մ3	2.000	60.146	120.29
36	Շուկա	Ամրանի արժեքը 12մմ А500с դասի	տն	0.076	447.554	34.06
37	Շուկա	Ամրանի արժեքը 8մմ Ас-1 դասի	տն	0.063	410.769	25.92
38	Е6-92	Միաձույլ ե/բ հենապատի պատրաստում В-15 դասի բետոնից	Ù3	1.500	85.566	128.35
39	Շուկա	Ամրանի արժեքը 10մմ А500с դասի	տն	0.154	441.419	67.98
40	7-668 կիրառ	Նստարանների տեղադրում ամրացումով	հատ	8.000	11.335	90.68
41	7-668 կիրառ	Աբղամանների տեղադրում ամրացումով	հատ	4.000	7.554	30.22
		Ընդամենը	69.31	%		15984.16
Էլեկտրալուսավորություն /4հատ/						

42	E1-966	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ3	3.200	11.168	35.74
43	E1-968	Բնահողի ետլիցք ձեռքով	մ3	0.050	1.396	0.07
44	E6-1	B-7.5 դասի բետոնից նախապատրաստակ ան շերտի պատրաստում	մ3	0.032	40.184	1.29
45	E6-5	Միաձույլ ե/բ կետային հիմքերի պատրաստում B-15 դասի բետոնից	մ3	1.200	69.397	83.28
46	Շուկա	Ամրանի արժեքը 10մմ A500c դասի	տն	0.016	441.419	7.06
47	E6-82	Պողպատե պատյանի տեղադրում 133x4մմ խողովակներից	տն	0.035	129.956	4.58
48	Շուկա	133x4մմ պողպատե խողովակի արժեքը	գմ	2.800	7.489	20.97
49	E6-83	Պողպատե թիթեղի տեղադրում 8մմ	տն	0.010	1272.513	12.73
50	33-621	Մետաղական խողովակներից հենասյուների տեղադրում	հատ	4.000	15.429	61.72
51	Շուկա	108x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	20.800	5.577	115.99
52	Շուկա	42x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	11.200	2.295	25.71
53	15-614	Մետաղական մասերի 2 շերտ ներկում	մ2	8.531	1.658	14.14
54	8-594-1	Լուսադիոդային լամպ 50Վտ 7433լմ 6000Լ IP65	Ñ³ï	8	15.557	124.46
55	Շուկա	Տուփ ճյուղավորիչ 150x150	հատ	4.000	2.207	8.83
56	8-525-1	²ïïáÙ³ï ³Ýç³ïÇã »ñÏµ¨»é 10²	Ñ³ï	2	4.829	9.66
57	8-141-1	Մալուխի անցկացում ³ÉÛáõÙÇÝ» ԱԲԲԳ - 4x16ÙÙ2	գմ	200.000	0.997	199.31
58	8-141-1	Մալուխի անցկացում ³ÉÛáõÙÇÝ» ԱԲԲԳ - 4x10ÙÙ2	գմ	120.000	0.711	85.37
59	8-141-1	Մալուխի անցկացում ³ÉÛáõÙÇÝ» ԱԲԲԳ - 3x3.2ÙÙ2	գմ	76.000	0.501	38.10
60	8-417-11	ÊáÕáí³ï ïáÉÇ¿ÃÇÉ»Ý³ÛÇÝ Φ 50	գմ	104.000	0.977	101.64

61	8-417-10	×Ï³ËáÕáí³Ï åáÉÇ¿ÃÇÉ»Ý³ÛÇÝ Φ 32	գմ	12.000	0.675	8.10
62	E1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ3	20.500	3.338	68.44
63	E23-1	Ավազե նախապատրաստական շերտի պատրաստում	մ3	5.900	5.938	35.03
64	E1-968	Բնահողի ետլիցք ձեռքով, տոփանումով	մ3	14.600	1.396	20.38
64	C310-13 տ.մ.կ29	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	10.915	4.540	49.55
65	8-156-5	Մալուխի չոր հարդարում	հատ	9.000	1.214	10.93
		Ընդամենը	4.96	%		**1143.07**
		Մետաղական ճաղաշար H=0.9մ 30.2գմ				
66	E1-965	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ3	1.438	6.222	8.95
67	E1-968	Բնահողի ետլիցք ձեռքով	մ3	0.906	1.396	1.26
68	C310-13 տ.մ.կ29	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	1.011	4.540	4.59
69	8-11	Խճի շերտի պատրաստում	մ3	0.187	9.501	1.78
70	E6-2	Կետային հիմքերի պատրաստում պատրաստում B-15 դասի բետոնից	մ3	0.345	65.072	22.46
71	E6-82	Թերթապողպատի տեղադրում	տն	0.0087	1020.969	8.85
72	E7-735	Մետաղական բազրիքի պատրաստում և տեղադրում մետաղական էլեմենտներից	·Ù	30.200	3.623	109.42
73	Շուկա	40x40x2.5մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	27.90	1.586	44.25
74	Շուկա	40x30x2.5մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	60.40	1.335	80.61
75	Շուկա	20x20x1.5մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	149.56	0.530	79.22

76	15-614	Մետաղական մասերի 2 շերտ ներկում	մ2	24.885	1.658	41.26
		Ընդամենը	1.75	%		**402.66**
		Զրուցատաղավարների պատրաստում և տեղադրում /1հատ/				
77	E1-965	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ3	1.050	6.222	6.53
78	E1-968	Բնահողի ետլիցք ձեռքով	մ3	0.700	1.396	0.98
79	C310-13 տ.մ.կ29	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	0.648	4.540	2.94
80	E6-5	Միաձույլ ե/բ կետային հիմքերի պատրաստում B-15 դասի բետոնից	մ3	0.350	69.397	24.29
81	Շուկա	Ամրանի արժեքը A500c դասի	տն	0.080	447.554	35.80
82	P25-17	Զրուցատաղավարի պատրաստում մետաղական խողովակներից	տն	0.380	113.192	43.01
83	Շուկա	80x80x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	42.600	3.855	164.23
84	Շուկա	30x30x1,5մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	57.900	0.824	47.71
85	9-24	Պրոֆ /գունավոր/ թիթեղի ծածկույթի պատրաստում 0.5մմ հաստությամբ ԿՊ-21-0.5մմ	մ2	12.000	7.906	94.87
86	7-668	Մետաղական նստարան փայտե նստատեղերով 180x40սմ	հատ	2.000	69.814	139.63
87	15-614	Զրուցատաղավարի մետաղական մասերի 2 շերտ յուղաներկում	մ2	27.000	1.658	44.77
88	11-6	Խճի շերտի պատրաստում 10սմ հաստությամբ /բետ սալիկների տակ/	մ3	0.750	16.739	12.55
89	E23-1	Ց/ավազե չոր խառնուրդի պատրաստում բետոնե սալիկների տակ 5սմ հաստությամբ	մ3	0.375	15.833	5.94

90	27-175	Բ»ïáÝ» ¹»Ïáñ³ïÇí ë³ÉÇÏÝ»րի տեղադրում (старый город)	մ2	7.50	10.156	76.17
91	8-11	Խճի նախապատրաստական շերտի պատրաստում	մ3	0.100	9.501	0.95
92	27-79	Բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով 80x200մմ	գմ	10.000	5.928	59.28
		Ընդամենը	3.29	%		**759.65**
		Ոռոգում				
93	E1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ3	38.640	3.338	129.00
94	E23-1	Ավազե նախապատրաստական շերտ պատրաստում H=10սմ	մ3	6.440	5.938	38.24
95	E1-968	Ավազի պաշտպանիչ շերտի իրականացում խողովակաշարի վրա H=10սմ	մ3	6.440	4.633	29.84
96	E1-968	Բնահողի ետլիցք ձեռքով, տոփանումով	մ3	25.760	1.396	35.96
97	C310-13 տ.մ.կ29	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	23.828	4.540	108.17
98	E22-117	Պոլիէթիլենային խողովակների տեղադրում Φ25մմ, փորձարկումով	գմ	161.000	0.605	97.35
99	E22-64	ԽáÕáí³ÏÇ պատյանի տեղադրում ö51x2.5ÙÙ	գմ	9.000	2.254	20.29
100	22-144	ÊáÕáí³ÏÝ»ñÇ áõÅ»Õ³óí³Í Ñ³Ï³Ïáéá½ÇáÝ մեկուսացում Φ50ÙÙ	.Ù	9.000	1.146	10.31
101	Շուկա	Պոլիէթիլենային ձևավոր մասեր	հատ	72.000	0.515	37.08
102	E16-185	Ջրցան սպրինկլերային ցնցուղներ 25մմ	հատ	45.000	5.763	259.36
103	22-397	Միացում գործող ջրագծին	տեղ	1.000	3.349	3.35
		Ընդամենը	3.33	%		**768.95**
		Ընդամենը				**2251.15**
		Սարքավորումներ	2.35197	%		**452.00**

1	7-668 կիրառ	Նստարանների տեղադրում ամրացումով	հատ	8.000	45.000	360.00
2	7-668 կիրառ	Աբղամանների տեղադրում ամրացումով	հատ	4.000	23.000	92.00
		Ընդամենը				**22971.15**
		ԱԱՀ	**20%**			**4594.23**
		Ընդամենը				**27565.38**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900032313174
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԷԼԻՏ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
Հասցե ք.Մասիս, 8 փ. տուն 22
Բանկ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220163331378000
ՀՎՀՀ 00190721

Տ.Առաքելյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 1.1
ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/25-3 **ծածկագրով**
բաց մրցույթի հրավերի

ՀԱՎԱՍՏՈՒՄ
հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման պարտավորության մասին

«ԷԼԻՏ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն հավաստում է, որ **ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/25** ծածկագրով բաց մրցույթի շրջանակում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, պարտավորվում է նույն ծածկագրով մրցույթի շրջանակում կնքվող պայմանագով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքում տեղադրել (օգտագործել) պայմանագրին կից ներկայացված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութեր և (կամ) սարքեր ու սարքավորումներ՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900032313174
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԷԼԻՏ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
Հասցե ք.Մասիս, 8 փ. տուն 22
Բանկ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220163331378000
ՀՎՀՀ 00190721

Տ.Առաքելյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 2
«14» «05» 2024 թ. կնքված
ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/25-3 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԿՈՄԻՏԱՍ 16 ՇԵՆՔԻ ԲԱԿԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
5	Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտաս 16 շենքի բակի հիմնանորոգման աշխատանքներ	Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	Մինչև 130 օրացուցային օրը ներառյալ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900032313174
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԷԼԻՏ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
Հասցե ք.Մասիս, 8 փ. տուն 22
Բանկ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220163331378000
ՀՎՀՀ 00190721

Տ.Առաքելյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 3
«14» «05» 2024 թ. կնքված
ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/25-3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքների դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
5	45611300/88	Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտաս 16 շենքի բակի հիմնանորոգման աշխատանքներ	------	------	------	------	11175644	11175644	22351288	22351288	22351288	22351288	22351288	22351288	22351288

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են առողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900032313174
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԷԼԻՏ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
Հասցե ք.Մասիս, 8 փ. տուն 22
Բանկ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220163331378000
ՀՎՀՀ 00190721

Տ.Առաքելյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____ -	_____
_____ -	_____
գտնվելու վայրը _____ –	գտնվելու վայրը _____
հհ _____ –	հհ_____
հվհհ _____ –	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

	Կատարված աշխատանքների							
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

acba

08 մայիսի 2024թ.

Թիվ 016-260

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
ԹԻՎ 23 16 40 821206/5

(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/25» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԷԼԻՏ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) կողմից թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/25-3» պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 4.134.807 (չորս միլիոն հարյուր երեսունչորս հազար ութ հարյուր յոթ) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև 20/09/2024թ.-ին հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ, քան 17 փետրվարի 2025թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/25-3» ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա

ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Մասիս» մասնաճյուղի կառավարիչ Գ. Պետրոսյան

Կատարող՝
Տաթևիկ Մարտիրոսյան
Հեռ.՝ 010 31-88-88 (ներքին՝ 7089)

acba

08 մայիսի 2024թ.

Թիվ 016-261

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
ԹԻՎ 23 16 40 821206/4

(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ԷԼԻՏ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/25-3» պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին անվերապահորեն վճարել 2.756.538 (երկու միլիոն յոթ հարյուր հիսունվեց հազար հինգ հարյուր երեսունութ) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև 20/09/2025թ.-ին հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ, քան 17 փետրվարի 2026թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-24/25-3» պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Մասիս» մասնաճյուղի կառավարիչ Գ. Պետրոսյան

Կատարող՝
Տաթևիկ Մարտիրոսյան
Հեռ.՝ 010 31-88-88 (ներքին՝ 7089)